

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՍԻ ԳՈ. ՄԻԿՐՈԲԻՈԼՈԳԻԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒ
МИКРОБИОЛОГИЧЕСКИЙ СВОРНИК АН АРМЯНСКОЙ ССР

Պ Ր Ա Կ Վ I

1951

Выпуск VI

Հ. Կ. ՓԱՆՈՍՅԱՆ, Ա. Ի. ՄԻԿԱՅԵԼՅԱՆ, Շ. Ս. ԹԱՌԱՅԱՆ ԵՎ Ռ. Շ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՑԱՆՔԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԵԶ ՄՏՆՈՂ ՄԻ ՔԱՆԻ ԲՈՒՅԱՄԵՐԻ
ԵՎ ՀՈՂԻ ՄԻԿՐՈԲԱՅԻՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

Ակադեմիկոս Գ. Ռ. Վիլյամսը (Վիլյամս, 1950) առաջին անգամ մանրամասն ուսումնասիրելով հողի մեջ գործող միկրոօրգանիզմների և բույսերի փոխազդեցության հարցը, ցույց տվեց, որ այդ երկու միկրու և մակրոօրգանիզմների ասոցիացիոն գործունեությունը վճարելու հաշանակություն ունի հողի բերքիության և բույսերի բերքատվության բարձրացման գործում:

Ակադեմիկոս Տ. Դ. Լիսենկոն (1950) բաղմից նշել է, որ հողի մեջ բնակվող միկրոօրգանիզմների կենսական պրոցեսները կարենու դեր են խաղաւում հողի բիոլոգիայի բարդ կոմպլեքսում։ Հետեւապես, այդ պրոցեսների ուսումնասիրության հարցերը կարենու նշանակություն ունեն սովետական ագրորիոլոգիական գիտությունների սիստեմում։

Սովետական միկրոբիոլոգներն ու հողագետները, զինվելով մատերիալիստական բիոլոգիայի կորիֆեյներ՝ Դոկտուչակի, Կոստիչևի, Վիլյամսի, Ֆիմիրյագիկի, Միջուրինի և Լիսենկոյի մշակած սովետական ազրորիոլոգիայի գիտական հիմունքներով, իրենց աշխատանքներում բազմից նշել՝ են հողի մեջ բնակվող բազմազիսի միկրոօրգանիզմների կենսական պրոցեսների զերը հողագաղմության օրինաչափություններում ու հողի բերքիության զինամիկայում և, այդպիսով, հաստատել ու հիմնավորել են սովետական երկրագործության գիտական հիմունքները։ Այդ ասպարեզում անգնահատելի է ակադեմիկոս Գ. Ռ. Վիլյամսի երախտիքը։ Նա էր առաջինը, որ ցույց տվեց հողում տեղի ունեցող բազմապիսի բիոլոգիական պրոցեսների փոխազարձ կապը և նրանց միասնությունը։ Դրանով էլ նա մշակեց հողի և նրա բերքիության իր նոր, վիլյամսյան ահսական հիմունքները։

Գ. Ռ. Վիլյամսի՝ հողի բիոլոգիային վերաբերող կլասիկ աշխատանքների հիման վրա սովետական գիտնականներից շա-

տեղը բազմիցու հաստատել են հողում զարգացող միկրոօրդանիզմների և առանձին տեսակի բույսերի փոխազդեցության սպեցիֆիկությունը և դրա նշանակությունը հողի բազմապիսի բիոլոգիական պրոցեսների ինտենսիվության համար:

Մեր, Ա. Պետրոսյանի և Ա. Կիրակոսյանի (1948, 1949) այդ ասպարեզում կատարած աշխատանքներից պարզվում է, որ բույսերի առանձին տեսակների և հողի միկրոբային բնակչության տարբեր ֆիզիոլոգիական խմբերի փոխազդման բնույթը կախված է ոչ միայն բույսի առանձին տեսակների արժատային սիստեմի յուրահատուկ ազդեցությունից, այլև հողի ֆիզիկա-քիմիական կառուցվածքից և այդ պայմաններին հարմարված բազմաթիվ ու բազմապիսի միկրոօրգանիզմների փոխարարերությամբ արտահայտված ազդեցությունից։ Մեր այս աշխատության նպատակն էր՝ պարզել միատիպ, հողում զարգացող տարբեր գյուղատնտեսական կուլտուրաների և հողում բնակչող միկրոօրգանիզմների զանազան ֆիզիոլոգիական խմբերի փոխազդեցության բնորոշ կողմերը։ Դրանք տվյալ հողային սղայմաններում աճեցվող գյուղատնտեսական կուլտուրաների հաջորդականությունը կազմակերպելու և առանձին կուլտուրաներից բարձր բերք ստանալու միջոցառությունը մշակելու գործում, անկասկած, մեծ դեր կարող են խաղալ:

Այդ նկատառումով, մենք անհրաժեշտ գտանք առաջին հերթին հատկապես ուսումնասիրել Սևանի ավազանի տիպիկ Մարտունու շրջանում արածված, շազանակագույն սեանողերում կիրառված ցանքաշրջանառության մեջ մանող գյուղատնտեսական կուլտուրաներից կորնգանի, աշնանացան յորենի, կարտոֆիլի և ծխախոտի արմատային սիստեմներում զարգացող միկրոֆլորայի փոխարարերության յուրահատուկ կողմերը։ Առանձնապես ուշագրություն ենք զարձրել հողի միկրոբային բնակչության ընդհանուր և առանձին ֆիզիոլոգիական խումբ կազմող միկրոբների քանակի փոփոխման, ինչպես նաև միկրոբիոլոգիական պրոցեսների հետևանքով, սպիտակուցային նյութերի քայլացման, ամիակի օքսիգացման, նիտրատների վերականգնման և օդի ազոտի ֆիքսման ինտենսիվության վրա։

Այս հետազոտությունները կատարվել են բույսերի վեցից տացիայի տարբեր ժամանակներում։

**ՀԱՂԻ ՄԻԿՐՈԲԱՅԻՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԸ ԵՎ ՆՐԱ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Ինչպես հայտնի է, հողի բիոքիության որոշման գործում է ական նշանակության ունի ոչ միայն հողի միկրոբների բնդհանուր քանակը, այլև առանձին ֆիզիոլոգիական խումբ կազմող միկրոօրգանիզմների քանակը:

Որքան հողը հարուստ է միկրոբային բնակչությամբ, այնքան նա բերբի է, քանի որ միկրոբներով հարուստ հողում տեղի են ուժենաւմ ինտենսիվ միկրոբիոլոգիական պրոցեսներ, ուրով և առանձված է բույսերի նորմալ սննդառությունը:

Մեր հետազոտություններից պարզված է, որ Մարտունու շրջանի շագանակագույն սևանողում աճող առանձին գյուղաբնակչության կուլտուրաներ խիստ տարբեր փոխհարաբերության մեջ են մտնում հողում զարգացող միկրոօրգանիզմների հետ, ահա թե ինչու կուլտուրաներով զբաղեցրած հողերում միկրոբների բնդհանուր քանակը խիստ տարբեր է:

Թե ինչպես է արտահայտվում այդ տարբերությունը, ցույց է տրված աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

Միկրոօրգանիզմների բնդհանուր քանակը մեկ գ հողում (միլիոններով)

Մանդանյութեր	Գ ա բ ն ա ն ը		Ա մ ռ ա ն ը		Ա շ ն ա ն ը	
	մ ա ն ի ն ո ւ թ ե ր ո ւ թ ե ր ո ւ	հ ո ղ ի է ք ս ա զ ա ր	մ ա ն ի ն ո ւ թ ե ր ո ւ թ ե ր ո ւ	հ ո ղ ի է ք ս ա զ ա ր	մ ա ն ի ն ո ւ թ ե ր ո ւ թ ե ր ո ւ	հ ո ղ ի է ք ս ա զ ա ր
Բույսեր	մ ա ն ի ն ո ւ թ ե ր ո ւ թ ե ր ո ւ	մ ա ն ի ն ո ւ թ ե ր ո ւ թ ե ր ո ւ	մ ա ն ի ն ո ւ թ ե ր ո ւ թ ե ր ո ւ	մ ա ն ի ն ո ւ թ ե ր ո ւ թ ե ր ո ւ	մ ա ն ի ն ո ւ թ ե ր ո ւ թ ե ր ո ւ	մ ա ն ի ն ո ւ թ ե ր ո ւ թ ե ր ո ւ
Կորնազան 2-րդ տարվա	125	217	296	594	644	148
Կարտոֆիլ	80	174	173	228	240	280
Շխախոս	58	60	146	146	372	240
Աշնան ցորեն	70	116	160	102	264	212
Հմային բուսական նություն	52	159	247	44	326	210
	20	80		100	115	156
				32	80	84
				16	74	80
				48	124	146
				20		160

Ինչպես աղյուսակից երևում է, կորնազանով զբաղեցրած հողում միկրոօրգանիզմների բնդհանուր քանակը բոլոր դեպքերում էլ անհամեմատ մեծ է, քան մյուս բույսերով զբաղեցրած հողերում.

դա առանձնապես լավ է արտահայտվում ամառվա ընթացքում:

Դա, անկասկած, հետեւանք է նրան, որ կորնգանը ամառվա ամիսներին գտնվելով իր բուռն ամման ընթացքում, հողի մեջ կուտակում է մեծ քանակությամբ ազոտ պարունակող օրգանական նյութեր, որոնք նպաստելով հողում բնակվող միկրօրգանիզմների հիմնական պրոցեսներին, մեծացնում են նրանց թիվը:

Ըստհակառակը, կարտոֆիլով և ծխախոտով զբաղեցրած հողերում միկրօրգանիզմների քանակը համեմատարար փոքր է, սա ել մասսամբ պետք է բացարձել հողի ինտենսիվ մշակման հետեւանքով տեղի ունեցած ուժեղ աերացիայով, որն արագ կերպով քայլայում և հանքայնացնում է օրգանական նյութերը:

Այդ գործողությունը, իհարկե, բույսերի աճը մեծացնելու համար ցանկալի է, քանի որ միկրօրգանիզմների քանակի հարատես աճը կարող է երբեմն նպաստել բույսերի ինտենսիվ զարգացմանը և որոշ զեղչքերում էլ թուլացնել այն:

Աշնանացան ցորենով զբաղեցրած հողերում միկրօրգանիզմների ընդհանուր քանակն այնքան էլ խիստ չի ապրելովում կարտոֆիլով և ծխախոտով զբաղեցրած հողերի միկրօրգանիզմների ընդհանուր քանակից, սակայն, ինչպես երևում է, աշնանացան ցորենի արժատային սիստեմի խիստ ցանցավորումը և նրա միջոցով հողում արտաքրված օրգանական նյութերն այնքան էլ շատ չեն, որ կարողանան հողում զարգացող միկրօրգանիզմների կենսական պրոցեսներում արագ փոփախություն առաջացնել, թեպես ցորենի աճեցողության ընթացքում միկրօրգանիզմների մեծագույն մասը կպած են նրա արժատային սիստեմին:

Ճամային բուսականությամբ զբաղեցրած հողում միկրորգանիզմների քանակը համեմատարար փոքր է, թեև բույսերի աճման ընթացքում այդ հողում բավական շատ օրգանական նյութեր են կուտակվում: Դա մեծ մասամբ բացարձում է նրանով, որ ճամային բուսականությամբ զբաղեցրած հողում աերացիան շատ թույլ լինելու հետևանքով, միկրօրգանիզմներից շատերը չեն կարողանում զարգանալ: Հենց որ հողը մշակում է, միկրօրգանիզմներն սկսում են ինտենսիվ գործել և նրանց քանակն արագ մեծանում է: Ազատ պարանակող օրգանական նյութերի կուտակումը հողում, ինչպես հայտնի է, առանձնապես բարերար ազգեցություն է թողնում նեխման բակտերիաների զորունեության վրա: հետեւապես հողում նման բակտերիաների շա-

տությունն ապացուցում է, որ մեծ քանակությամբ ազոտային օրդանական նյութեր են կուտակվել բույսերի կողմէց:

Այդ նպատակով, մեր աշխատանքների ընթացքում միկրոօրդանիկմների քանակի հաշվառման զուգընթաց, համապես հաշվի ենք առել նեխման բակտերիաներից՝ Bac. mycoides, Bac. mesentericus, Bac. subtilis, Bac. megatherium-ների քանակը և պարզել, որ իրոք, այն բույսերով զրագեցրած հողերում են նրանք շատ, որոնք իրենց արմատային սիստեմի շըրջապատի հողում մեծ քանակությամբ ազոտ պարունակող օրդանական նյութեր են կուտակում: Վերը հիշված բակտերիաների ընդհանուր քանակի փոփոխությունները տարբեր կուտառաներով զրագեցրած հողերում ցույց է տրված աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2

Bac. mycoides, Bac. mesentericus, Bac. subtilis, Bac. megatherium-ների ընդհանուր թիվը մեկ գ հողում (մեթոններով)

Բ ռ ւ յ ս ե ր	Գորհնակը	Աճումնը	Աշնանը
Կորնգան	1,7	4,1	1,3
Կարտոֆիլ	0,98	1,5	1,56
Միսիսուս	1,31	1,9	1,5
Աշնանացան ցորեն	1,43	2,4	1,41
Շմային բուսականություն	0,22	0,50	0,40

Ինչպես տևանում ենք աղյուսակ 2-ում բերված տվյալներից, վերը հիշված նեխման բակտերիաների քանակն զգալիորեն շատ է կորնգանով զրագեցրած հողերում, այս հանգամանքը մի անգամ ևս ցույց է տալիս, որ կորնգանն իր վեգետացիայի ընթացքում հողի մեջ կուտակում է բավական մեծ քանակությում ազոտային օրդանական նյութեր, որոնք նեխման բակտերիաների համար լավագույն սննդանյութեր հանդիսանալով՝ նպաստում են բակտերիաների արագ բազմացմանը. Դա ավելի ցայտուն է արտահայտվում բույսերի ծաղկման շրջանում:

Կարտոֆիլով, ծխախոտով և աշնանացան ցորենով զրագեցրած հողերում նեխման բակտերիաների քանակն այնքան էլ լիսա չի փոփոխվում: Դրա պատճառը պետք է վերագրել նրան,

որ այլ բույսերն իրենց վեգետացիայի ընթացքում արտադրում են ոչ թե ազոտային օրգանական նյութեր, այլ, ինչպես ներքեւում կտևսնենք, անազոտ ածխածնային միացություններ, որոնք նպաստում են Radiobacter-ների և հողում ազատ ազբող ազոտաբակտերիաների գործունեությանը:

Աղյուսակ 2-ում բերված տվյալներից երեսում է, որ ձեմային բույսերով զրաղեցրած հողում Bac. mycoides, Bac. mesentericus, Bac. meghaterium, Bac. subtilis-ների քանակը համեմատաբար քիչ է. դա ապացույց է, որ նախ՝ այլ բույսերն իրենց զարգացման ընթացքում շատ քիչ քանակությամբ ազոտ պարունակող օրգանական նյութեր են կուտակում և երկրորդ՝ այդ բույսերի խելա արմատային ցանցի և հողի յուրահատուկ ֆիզիկական կառուցվածքի շնորհիվ ստեղծված անաերոր պայմաններում արգելվում է հիշյալ բակտերիաների նորմալ կենսագործունեությունը: Ինչպես վերևում ասվեց, կարառվիրով, ծխախոտով և աշնանացան ցորենով զրաղեցրած հողերում քիչ են նեխման բակտերիաները, սակայն մեր դիտադրությունները ցույց են տալիս, որ նրանք հարուստ են այլ տիպի բակտերիաներով, որոնք իրենց կենսագործունեության ընթացքում այնքան էլ պահանջկու չեն աղոտային օրգանական նյութերի հանգեց:

Աղյուսակ 3

Լորձնային բակտերիաների և աղոտորակտերիաների բան ակը
մեկ գ հողում (միլիոններով)

Բ ու յ ս ե կ ը	Բակտերիաներ	Գորնանը	Ամռանը	Աշնանը
Կորնգան	Radiobacter	8	12	6
	Azotobacter	10	10	5
Կարտոֆիլ	Radiobacter	24	20	20
	Azotobacter	5	5	5
Ծիամսոս	Radiobacter	18	20	12
	Azotobacter	1	5	0,5
Աշնանացան ցորեն	Radiobacter	22	64	24
	Azotobacter	15	15	15
Հմային բուսական-նություն	Radiobacter	4	16	6
	Azotobacter	0,5	1,0	—

բերված են այն տվյալները, որոնք վերաբերում են տարբեր կուլտուրաներով զբաղեցրած հողերում լորձնային (Radiobacter) բակտերիաների և ազոտորակտերիաների քանակի փոփոխություններին:

Ինչպես ցույց են տալիս ազյուսակ 3-ում մեջ բերված թվերը, Radiobacter-ները, կամ ընդհանրապես լորձնային բակտերիաները կորնգանով զբաղեցրած հողերում համեմատաբար քիչ են և հակառակը, կարտոֆիլով, ծխախոտով և մասնավորապես աշնանացան ցորենով զբաղեցրած հողերում նրանք ավելի շատ են, իսկ ազոտորակտերիաները հատկապես շատ են աշնանացան ցորենով զբաղեցրած հողում:

Իորնգանով զբաղեցրած հողում ազոտորակտերիաները նույնապես շատ են, քան կարտոֆիլով և ծխախոտով զբաղեցրած հողերում: Դա մասամբ պետք է բացատրել նրանով, որ նրանք լավ են աճում թե ազոտային օրդանական և թե անազուտ օրդանական նյութերի առատության պայմաններում, միայն այն տարրերությամբ, որ, ինչպես այդ քիչ հետո կտնանենք, ազոտ պարունակող օրդանական նյութերով հարսւստ միջավայրում ազոտորակտերիաները օդից շատ թույլ ինտենսիվությամբ են ազոտ փիքում, իսկ անապոտ օրդանական նյութերի առատության դեպքում նրանք մեծ քանակությամբ ազոտ են յուրացնում օդից: Այս հանգամանքը լավ է արտահայտվում՝ աշնանացան ցորենով զբաղեցրած հողում: Ճմային բուսականությամբ զբաղեցրած հողում թե ազոտորակտերիաները և թե լորձնային բակտերիաները համեմատաբար քիչ են, դրա պատճառը դարձյալ պիտք է վերագրել հողի աերացիայի ինտենսիվությանը, քանի որ հիշյալ բակտերիաները իրենց նորմալ գործունեության համար պահանջում են, որ հողում լինի բավականաչափ օդ՝ աերացիա: Բացի վերոհիշյալ միկրոօրգանիզմների առանձին ֆիզիոլոգիական խմբերի հաշվառումից, մենք հետազոտել ենք նույն կորնգանով, կարտոֆիլով, ծխախոտով, աշնանացան ցորենով և ճմային բուսականությամբ զբաղեցրած հողերում ճառադայթառների ու բորբոսասնկերի քանակի փոփոխությունները:

Այս խմբի միկրոօրգանիզմների ընդհանուր քանակությունը տարբեր կուլտուրաներով զբաղեցրած հողերում, փոքր տատանումներով, համարյա նույն օրինաչափ փոփոխությունն է կրում: Թե ինչպիսի՞ փոփոխություն է կրում ճառադայթառների և բորբոսասնկերի քանակը ցանքաշրջանառության մեջ մտնով:

Ճառագայթասնկերք և բորբոսանկերք

Բռնշնչը	Անդամյութեր	Անկեր	Գաղտնաբառ		
			Հոգի էքսպրակտ		Մատզեպաս- հային ազար
			Ժանձի- տով	զլիցերի- նով	
Կորնգան	Ճառագայթասնկերք		—	6,0	4,0
	Բորբոսանկերք		2,0	8,0	4,0
Կարտոֆիլ	Ճառագայթասնկերք		—	10,0	6,0
	Բորբոսանկերք		4,0	4,0	6,0
Մխախոս	Ճառագայթասնկերք		—	10,0	8,0
	Բորբոսանկերք		4,0	6,0	6,0
Աշնանացան ցորեն	Ճառագայթասնկերք		—	4,0	14,0
	Բորբոսանկերք		6,0	2,0	—
Ճային բռնսա- կանություն	Ճառագայթասնկերք		—	5,0	9,0
	Բորբոսանկերք		4,0	2,0	2,0

վերը հիշված կոլտուրաներով զբաղեցրած հողերում, այդ երեսում
է աղյուսակ 4-ում բերված թվական տվյալներից: Աղյուսա-
կում բերված տվյալներից՝ երկում է, որ ճառագայթասնկերքի
քանակը ընդհանրապես ավելի շատ է, քան բարբասանկերինց:
Բայց դրանից սնկերն ավելի շատ են կարտոֆիլով և ծիամո-
տով զբաղեցրած հողամասերում: Թերևն դա պեսք է բացառ-
քել նախ՝ հողի ինտենսիվ մշակությամբ, որի ժամանակ հողի
աերացիան բարերար ազդեցություն է թողնում նրանց կեն-
սակործունեության վրա, և ապա՝ հենց նույն բույսերի արմա-
տային օխտեմի նպաստավոր ներգործությամբ, երբ սնկերին
անհրաժեշտ սննդանյութեր են մատակարարում:

Աշնանացան ցորենով զբաղեցրած հողում սնկերը նույն-
պես զլալի թվով են հանդես գալիս իս հատկապես լավ է եր-
եսում ամառվա ընթացքում, բույսի հասունացման ժամանակա-
շրջանում: Այդ ավելի լավ է արտահայտված ճառագայթասնկե-
րքի նկատմամբ, որնք նույնիսկ աշնանը մեծ թվով են երկան
դալիս:

Քանակը մեկ գ հողում (միլիլուսներով)

Ալյուստ 4

Մասպիզունակ ին աղար	Ա մ ս ա ն ը		Ա շ ս ա ն ը	
	Հողի էքստրակտ աղար		մասպիզունակ ին աղար	Հողի էքստրակտ աղար
	մաննի- տով	գլցերի- նով		մաննի- տով
2,0	10,0	8,0	2,0	6,0
2,0	2,0	2,0	2,0	4,0
2,0	12,0	8,0	2,0	2,0
2,0	10,0	4,0	4,0	4,0
2,0	4,0	6,0	2,0	2,0
2,0	4,0	—	2,0	4,0
6,0	6,0	18,0	10,0	12,0
4,0	2,0	2,0	6,0	8,0
2,0	16,0	18,0	2,0	4,0
—	—	—	4,0	1,0
				2,0

ՀԱՂԻ ՄԻԿՐՈԲԱՅԻՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԲԻՌՈԳԻԱԿԱՆ
ՊՐՈՑԵՍՆԵՐԻ ԻՆՏԵՆՍԻՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տարբեր տեսակի բույսերի և միկրոբների փոխանակաբերությունը լավ է արտահայտվում վերջինների ոչ միայն քանակի, այլ և նրանց կենսական պրոցեսների վրա: Հաճախ միկրոբների քանակի տառանութերն այնքան բնորոշ չեն, որքան առանձին ֆիզիոլոգիական խմբերի կենսական պրոցեսները: Ուստի հողի միկրոբային բնակչության քանակի հետ մեկտեղ՝ անհրաժեշտություն է զգացվում հաշվի առնել նաև միկրոբովովիական այն պրոցեսները, որոնք էական նշանակություն ունեն բույսերի կյանքում: Այդ պրոցեսներից են, օրինակ՝ հողում գտնվող աղոտային նյութերի քայլայման ինտենսիվությունը կամ ամոնիֆիկացիան, նիտրատների կուտակումը՝ նիտրիֆիկացիան ու նրանց վերականգնումը՝ դենիտրիֆիկացիան և սպիտակուցային նյութերի կուտակումը կամ աղոտի ասիմիլացիան: Նկատի ունենալով այդ հանգամանքը, մեր այս աշխատանքների բնիմացքում մենք առանձնապես ուշադրություն դարձրինք վերոհիշյալ միկրոբիոլոգիական պրոցեսների ուսումնասիրության վրա:

Ամոնիֆիկացիա.—Հողում ազդուի շրջանառության պրոցեսում ազդու պարունակող օրգանական նյութերի գեղամինիզացիան մի կողմից, հումուսի կազմակերպումը մյուս կողմից, բույսերի սննդառության համար կարևոր նշանակություն ունի: Այդ պրոցեսի շնորհիվ է, որ հողում կուտակվում են ազդու պարունակող մի շարք հանգային միացություններ, որոնք վճռական նշանակություն ունեն բույսերի ազդային սննդառության համար:

Ազդու պարունակող օրգանական նյութերի գեղամինիզացիան ամբողջապես հանդիսանում է նեխման բակտերիաների կենսական պրոցեսների արդյունքը: Այդ կարևոր պրոցեսների ցուցանիշը միշտ էլ հանդիսանում է ամիսակի առաջացումը:

Եթե մենք կարողանանք ճիշտ հաշվի առնել ազդային նյութերի քայլքայման ժամանակ առանձնացած ամիսակը, ապա կարող ենք որպես նեխման բակտերիաների կենսական պրոցեսների ինտենսիվությունը այս կամ այն հողում: Դրա համար էլ մեր հետազոտությունների ընթացքում, տարբեր կուտարաներով գրաղեցրած հողերում անգամ, սպիտակուցային նյութերի քայլքայումից առաջացած ամիսակը հաշվի ենք առել հենց հողում: Այդ նպատակի համար օգտագործել ենք Հ. Կ. Փանոսյանի (Պահօсяն, 1944) մշակած մեթոդը:

Թե ինչպես է ընթանում ամոնիֆիկացիան շրջանառության մեջ մտնող, տարբեր կուտարաներով զրաղեցրած հողերում, այդ ցույց է արված աղյուսակ հ-ում:

Ինչպես անենում ենք, տարբեր կուտարաներով զրաղեցրած հողերում ամոնիֆիկացիայի ինտենսիվությունը խիստ չի տարբերվում իրարից, չնայած այդ հողերում ամոնիֆիկատորների քանակի միջև նկատվում են զգալի տարբերություններ: Դա բացառվում է նրանով, որ բնական պայմաններում առանձին բույսերի կողմից որքան շատ են կուտակվում ազդային նյութեր, այնքան էլ ամոնիֆիկատորները շատանում և ինտենսիվ են գործում: Հենց որ հողի մեջ մտցվում են ազդային նյութեր, ամոնիֆիկատորներն սկսում են արագ քայլքայի մրցցված ազդային նյութը: Դա ապացույց է, որ հողի պայմանները լավացնելու և նրա մեջ համապատասխան քանակությամբ ազդային նյութեր մացնելու դեպքում, ամոնիֆիկատորները հաղում սկսում են արագորեն գործել և իրենց կենսական պրոցեսների ընթացքում զգալի քանակությամբ ամիսակ կուտակել: Այս հանգամանքը մեծ նշանակություն ունի բույսերի հետագա սըն-

ժամանակը, քանի որ տարբեր խմբերի միկրոբանիզմներն ամիակը արագորեն ձևափոխելով՝ վեր են ածում աղոտական թթվի աղերի—նիտրատների, որոնք անմիջապես օգտագործվում են բույսերի արմատների կողմից:

Աղյուսակ 5

100 գ հողում 1 գ պեստունի քայլայման ժամանակ առաջացած
ամիակը քանակը (մգ-ներով)

Բ ու յ ս ե ր	Գարնանը	Ամռանը	Աշնանը
Կորնդան	87,07	91,24	92,48
Կարտոֆիլ	81,53	34,55	96,38
Շխախոս	88,8	74,87	109,33
Աշնանացան ցորեն	89,07	101,13	90,80
Հմային բուսականու-			
թյուն	106,51	64,52	90,79

Նիտրիֆիկացիա.—Հողում աղոտային նյութերի քայլայումից առաջացած ամիակը, ինչպես ասվեց, մի շաբք հողային միկրոօրգանիզմների կողմից օքսիդանալով, վեր է ածվում նիտրատների: Այդ տեսակեաից նիտրատների քանակն ուղիղ համեմատական է հողում կուտակված ամիակի քանակին: Բայց հաճախ, հատկապես բույսերի վեգետացիայի ընթացքում, հողում ամիակը շատ է լինում, քան նիտրատները: Դա բացատրվում է նիտրատների արագ շարժողությամբ, երբ նրանք կամ միկրոօրգանիզմների կամ բույսերի կողմից արագ օգտագործվելով, վեր են ածվում սպիրալակուցների: Սակայն հողում միշտ էլ որոշ քանակությամբ աղատ նիտրատներ են լինում: Դա հենց ինքնին ապացույց է, որ հողում անընդհատ նիտրիֆիկացիոն պրոցես է կատարվում:

Մեր այս աշխատանքների ընթացքում պարզվում է, որ տարբեր բույսերով զրաղեցրած հողերում ամիակի օքսիդացումն ընթանում է տարբեր ինտենսիվությամբ (տես աղյուսակ 6):

Աղյուսակ 6-ում բերված թվերը ցույց են տալիս, որ հողում նիտրիֆիկացիան ինտենսիվ է ընթանում գարնանը, բայց կորհողանով և հմային բուսականությամբ զրաղեցրած հողերում նիտրիֆիկացիոն պրոցես է:

հողում՝ համեմատաբար թույլ՝ ջնայած ամռան ընթացքում նիտրիֆիկացիան բոլոր տեսակի բույսերով զբաղեցրած հողերում ուժեղ է ընթանում, բայց առաջացած նիտրատներն արագ կապվում են թե միկրօրդանիդմների և թե, հատկապես, բույսերի կողմից։ Աշնանը համարյա նույն ինտենսիվությունն է նկատվում ինչ և ամռանը, միայն կորնգանով զբաղեցրած հողում նիտրատներն ավելի շատ են կուտակվում։ Դա արդեն պետք է վերաբերի կորնգանին, որն իր վեգետացիայի ընթացքում մեծ քանակությամբ ազոտային նյութեր կուտակելով, նախ՝ նպաստում է նեխման բակտերիաների կենսագործունեությանը, ապա մեծ քսնակությամբ ամիակի առաջացմանը, որի շնորհիվ էլ նիտրիֆիկացիայի բակտերիաներն ինտենսիվ են դորձում և մեծ քանակությամբ նիտրատներ կուտակում։

Աղյուսակ 6

Նիտրատների քանակը 100 գ հողում, ազոտը մգ-ներով
(Նիտրատները որոշվել են կոլորիմետրիկ եղանակով)

Բ ու յ ս ե ր	Գ արնանը	Ամռանը	Աշնանը
Կորնգան	8,87	2,78	12,85
Կարտոֆիլ	3,45	3,00	3,27
Ծխախոտ	5,58	4,13	2,73
Աշնանացան ցորեն	5,75	2,51	2,68
Համային բուսականություն	9,58	3,68	4,79

Այդ նիտրատների մի մասն օգտագործվում է բույսերի և միկրօրդանիդմների կողմից, մի զգալի մասն էլ ապատ վիճակում մնում է հողում, իսկ դա մեծ աշնանիություն ունի հետեւյալ տարին նույն հողամասում ցանվագ նոր բույսի համար։ Հենց այդ հանգամանքն էլ ապահովում է կորնգանից հետո ցանված կուլտուրաների բարձր բերքատվությունը։

Նիտրիֆիկացիոն պրոցեսի հետևանքով հողում կուտակված նիտրատների մի զգալի մասը, անկասկած, օգտագործվում է հողի բազմապիսի միկրօրդանիդմների կողմից։ Նիտրատներն առանձնապես խիստ ձևափոխվում են զենիտրիֆիկատորների կենսական պրոցեսում։ Այս խմբի միկրօրդների գործունեության բացասական կողմն այն է, որ նիտրատների ձևով կապված ազոտը նրանք հաճախ վեր են ածում ազատ ազոտի և հողը զգալի

չոփավ ազգատազրկվում է: Այս հանգամանքը մեծ մասամբ տեղի է ունենալ թույլ աերացիս ունեցող հողերում: Առաջի ինչու հողի միկրօբային բնակչության բնութագրման ժամանակ ամեն անդամ հաշվի է առնվում հողի գենիտրիֆիկացիոն պրոցեսի ինտենսիվությունը:

Մեր այս աշխատանքներից պարզվում է, որ Մարտունու շրջանում ցանքաշրջանառության մեջ մատող բույսերով զրադացրած հողերում, ինչպես այդ ցույց են տալիս աղյուսակ 7-ում ամփոփված թվական տվյալները, գենիտրիֆիկատորներն ամենուրեք տարածված են, և եթեն նրանց համար հողում ստեղծվում են նպաստավոր պայմաններ, ապա նրանք մեծ ինտենսիվաւթյամբ վերականգնում են հողում եղած նիտրատները:

Աղյուսակ 7

Նիտրատների վերականգնման ինտենսիվությունը. Նիտրատների քանակը 10 գ հողում և 100 մմ² էքստրակտում (ազոտը մգ-ներով)

	Գործնակար	Ամսանը	Աշխանը
Բաւրանիք	արդարացնելի բարձական բարձական	գործական բարձական բարձական	արդարացնելի բարձական բարձական
Կարնուան	28,03	27,86	28,11
Կարտոֆիլ	28,04	27,86	28,37
Շխախոս	28,01	27,83	28,34
Աշխանացան ցորին	28,01	27,88	28,20
Ճճոյին բռնականություն	28,00	27,84	28,10
			28,05
			28,10
			28,03

Աղյուսակ 7-ում բերված թվական տվյալները վերաբերվում են միայն արհեստական սննդանյութերի պայմաններին: Բնական պայմաններում, ինարկե, նույնը կարող է տեղի ունենալ, եթե հողում ստեղծվեն անաերոր պայմաններ: Այս հանգամանքը մի անդամ ևս ցույց է տալիս, որ հողի ֆիզիկական փառակը բարելավելու, նրա աերացիան կարգավորելու շնորհիվ նիտրատների վերականգնման պրոցեսը բնական պայմաններում մենք կարող ենք նվազագույն չափերի հասցնել և նիտրիֆիկացիայի ընթացքում զոյացած նիտրատների կուտակումն ապահովել, իսկ գրանով ապահոված կլինի կուլտուրական բույսերի ազոտային սննդառությունը:

Ազուտի ասիմիլացիան.—Հողի բիոլոգիական պրոցեսների, բույսերի և առանձին ֆիզիոլոգիական խումբ կազմող միկրոբների ասոցիատիվ փոխարարերության ընորոշման գործում կարեւոր դեր են խաղում հողում ազատ ապրող աղոտորակակերիաները, վերջիններիս կենսական պրոցեսների ինտենսիվությունը և աղոտ կապելու ունակությունը, ինչպես ցույց են տալիս մեր փորձերը, ամբողջովին կախված են ավյալ հողային պայմաններում զարգացող կուլտուրական բույսի յուրատեսակ ազդեցությունից և հողի մեջ շարժուն վիճակում գտնվող աղոտային նյութերի պաշտօնից: Այդ հանգամանքն ավելի ցայտուն կերպով արտահայտվում է մեր այս աշխատությունում:

Թե Մարտունու շլջանի շաղանակագույն սևահողերի ցանքաշրջանառության մեջ մտնող առանձին բույսեր և աղոտորակակերիաներն ինչպիսի փոխարարերության մեջ են մտնում, այդ երեսում է աղյուսակ 8-ում ամփոփված, աղոտի ասիմիլացիային վերաբերող թվական ավյալներից:

Աղյուսակ 8

Աղոտի ասիմիլացիայի ժամանակի մեջ գանձնիտի քայլայումից	
կաղված աղոտը մզ-ներով	

Բ ու յ ս ե ր	Գարնանը	Ամռանը	Աշնանը
Կորնզան	2,17	5,54	6,86
Կարտոֆիլ	5,33	7,41	9,49
Շխախոս	6,99	7,69	8,65
Աշնանացան ցորեն	6,53	9,67	13,75
Ումային բուսականություն			
Բյուն	6,33	6,71	10,18

Ինչպես տեսնում ենք աղյուսակ 8-ում նշված ավյալներից, աղոտի ասիմիլացիան կորնզանով զրադեցրած հողերում թույլ է ընթանում, չնայած այն բանին, որ այդ հողում աղոտորակակերիաները բավական շատ են: Այս հանգամանքը մի անգամ ևս հաստատում է, որ կորնզանն իր վեգետացիայի ընթացքում յուրահատուկ փոխարաբերության մեջ մտնելով պատրակակերիաների հետ, հողում զալիք քանակությամբ աղոտական նյութեր է կուտակում, որոնք, հողում ազատ ապրող աղոտորակակերիաների համար լավ սննդանյութ հանդիսանալով, թու-

լացնում են էլեմենտար ազոտի ասիմիլացիան: Հողում բավարար քանակով ազոտային նյութերի առկայության դեպքում, ազոտարակաբիաները օդից ազոտ կամ չեն յուրացնում կամ շատ քիչ քանակությամբ են յուրացնում:

Կարտոֆիլով, ծխախոտով, աշնանացան ցորենով զբաղեցրած հողում ազոտի ասիմիլացիայի պատկերը խիստ փոխվում է. այդ կուլտուրաների աճման դեպքում, հողի ազոտային նյութերն առափանակարար պակասելու հետեւանքով, ազոտարականերիաների ասիմիլացիոն ունակությունները փոխվում են, նրանք հողի մեջ բավարար քանակությամբ անազոտ ածխածնային նյութերը մացնելու դեպքում, սկսում են ավելի շատ զազային ազոտ յուրացնել օդից:

Այդ անսամելից աշնանացան ցորենով զբաղեցրած հողում ազոտարակաբիաներն ավելի շատ ազոտ են ֆիքսում, քան կարտոֆիլով և ծխախոտով զբաղեցրած հողերի ազոտարականերիաները, հատկապես ամռան և աշնան ամիսներին:

Դրանից էլ ենելով, միանգամայն հաստատ կարող ենք տակ որ աշնանացան ցորենը հողից ավելի շատ ազոտային նյութեր է վերցնում, քան կարտոֆիլը, ծխախոտը, իսկ երբ հոգած ազոտային նյութերը քաշնում կամ բացակայում են, ազոտարականերիաներն ստիպված են լինում զյությունը պահպանելու համար, բարձրացնել իրենց ազոտի ասիմիլացիոն ունակությունը՝ ձմային բառականությունը համարյա նույն օրինաչափ ազգեցությունն է թողնում ազոտարակաների՝ ազոտի յուրացման պրոցեսի վրա:

Ամփոփելով մեր այս ուսումնասիրության արդյունքները, կարող ենք անել հետեւյալ եղբակացությունները.

1. Ծագանակագույն սեանողում մշակվող զյուղանտեսական տարեր կուլտուրաներ իրենց արժանային սիստեմում իրարից խիստ տարբերվող և տարբեր փոխնարարերության մեջ մոնող միկրոբային բնակչություն են ընդունվում: Դրա հետեւանքով էլ հողի միկրոբային բնակչության քանակությունը տարբեր զյուղատնտեսական կուլտուրաներով զբաղեցրած հողերում խիստ տարբեր է:

Միկրոօրգանիզմներով առանձնապես հարուստ է կորնդանով զբաղեցրած հողը, որի մեջ զ պարունակում է 100-ից մինչև 644 միլիոն միկրոօրգանիզմ: Աշնանացան ցորենով զբաղեցրած



հողը համեմատաբար քիչ միկրոբներ է պարունակում՝ մեկ գ հողում 70—264 միկրոն:

Եշված բոլոր կուլտուրաներով զբաղեցրած հողերում միկրոօրգանիզմները մաքսիմում քանակությամբ լինում են ամունամիսներին, երբ բույսերը գտնվում են ըուռն աճման ստագիւայում:

2. Յանքաշրջանառության մեջ մտնող կորնդանը, կարառափիլ, ծխախոտը և աշնանացան ցորենը իրենց արժատային սիստեմում ունեն յուրաքանչակ միկրոբային բնակչություն. այսպես՝ կորնդանը, շնորհիվ իր արժատային սիստեմում մեծ քանակությամբ կուտակած ազուր պարունակով օրգանական նյութերի, իր սիզառիքերայում մեծ թվով նեխման բակտերիաներ է պարունակում. Բուկ աշնանացան ցորենը, ընդհակառակը, իր արժատային սիստեմում ավելի շատ պարունակում է լորձնային և ազուրակտերիաների խմբին պատկանող բակտերիաներ: Այդերեւյթը պետք է վերագրել նրան, որ աշնանացան ցորենը ոչ միայն ազուրային օրգանական նյութերը չի կուտակում հողում, այլև ինքն է հողից գերցնում այդ նյութերը Աշնանացան ցորենն իր խիստ ցանցավորվող արժատային սիստեմում արտադրում է ավելի շատ անազուր օրգանական նյութեր, որոնք բարերար ազդեցություն են թողնում լորձնային բակտերիաների ու ազուրակտերիաների կենսական պրոցեսների և, հատկապես, ազուրակտերիաների քանակի ավելացման վրա:

3. Սնկերի քանակին առանձնապես մեծ է բույսերով զբաղեցրած այն հողերում, որտեղ կամ ավելի շատ օրգանական նյութեր են կուտակվում, կամ հողի ինտենսիվ մշակումը նպաստում է օրգանական նյութերի արագ քայլքայմանը: Դրա շնորհիվ է, որ կորնդանով և ծխախոտով զբաղեցրած հողերում սնկերը համեմատաբար շատ են:

4. Յանքաշրջանառության մեջ մտնող բույսերով զբաղեցրած հողում միկրոօրգանիզմների տարրեր ֆիզիոլոգիական խրժերի քանակների միջև եղած տարրերությունն աղղում է նաև նրանց կենսական պրոցեսների ինտենսիվության վրա: Այդ կախված է նաև հողում համապատասխան նյութերի պաշարից: Օրինակ՝ ամռնիքիկատորներն ավելի ինտենսիվ են դրծում այն հողերում, որտեղ մեծ քանակությամբ աղղուային նյութեր են կուտակվում (կորնդանով զբաղեցրած հողում). սակայն նրանք եթե նույնիսկ քանակապես քիչ են լինում (կարտոֆիլով, ծխա-

խոտով, աշնանացան ցորենով զրագեցրած հողերում), արհեստական ճանապարհով նման հողերի մեջ աղոտային նյութեր մռւծելու գեղքում, նրանք նույնպես ինտենսիվ են աճում և արգած աղոտային նյութերը հողում արագ քայլքայելով՝ մեծ քանակությամբ ամբակակ են կուտակվում:

5. Գյուղանատեսական կուլտուրաներով զրագեցրած այն հոդերում, որտեղ մեծ ինտենսիվությամբ աղոտային նյութեր են կուտակվում և հետազայում այդ նյութերի քայլքայումից ամբիակ է առաջանում, ամբակի օրիգացման (նիւարի ֆիկացիայի) պրոցեսն էլ ինտենսիվ է ընթանում, հետևապես զգալի քանակությամբ նիւարատներ են կուտակվում (կորնգանով զրագեցրած հող). Վերջիններս թե՛ բույսերի կողմից են օգտագործվում և թե՛ միկրոբների:

Նիւարատների օգտագործումը միկրոբանիդմների կողմից ավելի ինտենսիվ է ընթանում հատկապես այն հողերում, որտեղ սակագն գույն են անաերոր պայմաններ:

6. Ցանքաշրջանառության մեջ ժամանակակից այն ըույսերը, որունք իրենց վեգետացիայի ընթացքում մեծ քանակությամբ աղոտային նյութեր են կուտակում հողում (կորնգան), աղոտի առիմիլացիայի ինտենսիվությանը չեն նպաստում, չնայած այդպիսի հոգերում աղոտարակաերիների քանակը բավական չառ է (մեկ զ հողում 15 միլիոն), իսկ ընդհակառակը, այն բույսերը (աշնանացան ցորեն, կարտոֆիլ), որունք աղոտային նյութեր քիչ են կուտակում կամ բոլորովին չեն կուտակում, հողում մեծ քանակությամբ անազատ օրգանական նյութեր են ամբարում, որով աղոտորակատերիների կենսական պրոցեսներին նպաստելով՝ մեծացնում են աղոտի ասիմիլացիայի ինտենսիվությունը:

7. Ցանքաշրջանառության մեջ, միենույն հողամասում զյուղատնտեսական կուլտուրաների հաջորդականությունը որոշելիս, անհրաժեշտ է հաշվի առնել վերը նշված հանգամանքները: Լավ է այնպես անել, որ իրենց վեգետացիայի ընթացքում հողում աղոտային նյութեր կուտակող բույսերին (կորնգան, առվույտ) հաջորդեն այնպիսի կուլտուրաներ, որոնք իրենց վեգետացիայի ընթացքում աղոտային նյութեր չեն կուտակում, այլ ընդհակառակը, յուրացնում են (հացահատիկներ, կարտոֆիլ, ծխախոտ և այլն): Նման հաջորդականությունը մեծապես նպաստում է առանց լրացուցիչ աղոտական պարաբռացման նշված կուլտուրաների բերքատվության բարձրացմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Վիլյամս В. Р.—1950. Избранные сочинения, т. I, изд. АН СССР.
- Исаакова А. А.—1936. К вопросу о природе воздействия бактериоризных микроорганизмов на растения. ДАН СССР, т. IV, № 9, стр. 417.
- Киракосян А. В.—1949. Развитие микроорганизмов в разрезе некоторых сельскохозяйственных культур. Микробиологический сборник АН Арм. ССР, вып. IV, стр. 67.
- Костычев С. П.—1930. Выводы агрехимического характера из работ отдела по биодинамике почв. Труды Института с. х. микробиологии, т. IV, стр. 29.
- Костычев С., Шелдумова А. и Шульгин Г.—1926. Исследование по биодинамике почв. Труды отдела с. х. микробиологии, т. I, стр. 5.
- Красильников Н. А.—1934. Влияние корневых выделений на развитие азотобактера и других почвенных микробов. Микробиология, т. III, в. 3, стр. 343.
- Красильников Н. А.—1939. Влияние почвенных бактерий на рост пшеницы. Микробиология, т. VIII, в. 5, стр. 523.
- Красильников Н. А.—1940. О влиянии микроорганизмов на рост растений. Микробиология, т. IX, в. 5, стр. 395.
- Ղիզին Տ. Գ.—1950. Աղբորիդոգիա: ՀՍՍԲ ԳԱ հրատ.
- Պանօսյան Ա. Կ.—1944. Новый метод определения интенсивности процесса аммонификации почв. ДАН Арм. ССР, т. I, № 3, стр. 27.
- Փանոսյան Հ. Կ., Թառայան Ե. Ա. և Հարությունյան Բ. Յ.—1949. Աղոտք տափակացնելու վայրապես արմատային սկաների ազդեցության հարցը շուրջը: ՀՍՍԲ ԳԱ, Մէկուրիբուդիական ժողովածու, պրակ 4, էջ 31:
- Քետրապյան Ա. Պ. և Կիրակոսյան Ա. Վ.—1948. Աղոտարականիքի ազեցիֆիկությունը գյուղատնտեսական տարրերի կուլտուրաների համար: ՀՍՍԲ ԳԱ, Մէկուրիբուդիական ժողովածու, պրակ 4, էջ 25:

Ա. Կ. Պանօսյան, Ա. Ա. Մինասյան, Խ. Ս. Տարայն և Բ. Ռ. Արդյունյան

**К вопросу о взаимодействии некоторых растений,
входящих в севооборот, и почвенных
микроорганизмов**

Р е з յ ո ւ մ ս

Из учения Докучаева, Костычева, Вильямса, Тимирязева, Мичурина и Лысенко о комплексе сложных биологических процессов почвы и растений вытекает, что обитающие в почве многообразные микроорганизмы при почвообразовательном процессе находятся во взаимной связи и единстве с отдельными видами произрастающих в почве растений. С этой

точки зрения, при изучении интенсивности биологических процессов почвы, необходимо учитывать взаимную связь микроорганизмов и растений.

В данной работе нами сделана попытка выяснить характерные стороны взаимоотношений между различными физиологическими группами обитающих в однотипных почвах бактерий и отдельными видами возделываемых растений.

Выяснение этого вопроса сыграет большую роль в организации севооборота возделываемых в данных почвенных условиях сельскохозяйственных культур и в разработке мероприятий по получению высоких урожаев.

Исходя из этих соображений, нами специально изучались специфические стороны взаимоотношений микрофлоры почв из под эспарцета, озимой пшеницы, картофеля, табака и самих названных растений. Для опытов был использован каштановый чернозем, типичный для Севанского бассейна и распространенный в Мартунинском районе Армянской ССР.

В процессе этой работы уделялось особое внимание составу микроорганизмов почвы, изменению общего количества микроорганизмов и количества микроорганизмов отдельных физиологических групп, а также разложению белковых веществ, окислению аммиака, восстановлению нитратов и интенсивности фиксации азота атмосферы.

Данные о биологических процессах приведены в таблицах 1—8.

Исследования произведены в разные сроки вегетации. Результаты проведенных работ дают нам возможность сделать следующие выводы:

1. Различные сельскохозяйственные культуры, возделываемые на каштановых черноземах, содержат в своих корневых системах сильно отличающуюся по своим взаимоотношениям микрофлору.

Особенно богата микроорганизмами почва под эспарцетом, в одном г которой находятся от 100 до 644 миллионов микроорганизмов. Почва, занятая озимой пшеницей, содержит сравнительно меньше микроорганизмов (в одном г почвы от 70 до 264 миллионов). В почвах всех отмеченных культур мак-

симальное количество микроорганизмов наблюдается в летние месяцы, когда растения находятся в стадии бурного роста.

2. Входящие в севооборот культуры, как то эспарцет, картофель, табак и озимая пшеница, в своих корневых системах содержат своеобразные микроорганизмы; например, эспарцет, благодаря накоплению в своей корневой системе органических веществ, богатых азотом, содержит в своей ризосфере большое количество гнилостных бактерий; наоборот, в корневой системе озимой пшеницы преобладают представители группы слизистых бактерий и азотобактерий. Это объясняется тем, что озимая пшеница не только не накапливает азотистых органических веществ, но даже берет их из почвы, и в своей сильно разветвленной корневой системе вырабатывает много безазотистых органических веществ, которые оказывают благоприятное влияние на жизнедеятельность слизистых бактерий и азотобактерий, и, особенно, на увеличение количества последних.

3. Количество грибов особенно велико в почвах, занятых такими растениями, при культивировании которых накапливается много органических веществ, или вследствие интенсивной обработки их происходит быстрое разложение органических веществ. Благодаря этому почва, засеянная эспарцетом и табаком, содержит сравнительно большие грибов.

4. Различие количества микроорганизмов различных физиологических групп в почвах, занятых растениями, входящими в севооборот, влияет на интенсивность их жизненных процессов. Это зависит также от запасов определенных веществ в почве. Например, аммонификаторы действуют более интенсивно в почвах, богатых азотистыми веществами (почва, занятая эспарцетом), если же в почве мало азотистых веществ (почвы, занятые картофелем, табаком, озимой пшеницей), то путем искусственного внесения их в подобную почву удается увеличить интенсивность роста аммонификаторов, которые быстро разлагают азотистые вещества в почве и накапливают аммиак в большом количестве.

5. В тех почвах, занятых сельскохозяйственными культурами, где с большой интенсивностью накапливаются азотистые вещества, которые, в свою очередь, разлагаясь, образуют аммиак, процесс нитрификации (окисления) проходит интен-

сивно, следовательно, накапливается довольно много нитратов (почва, занятая эспарцетом). Последние используются как растениями, так и микробами. Восстановление нитратов микрорганизмами проходит более интенсивно в тех почвах, в которых создаются анаэробные условия.

6. Растения, входящие в севооборот, которые в период вегетации накапливают в большом количестве азотистые вещества (эспарцет), не способствуют интенсивности ассимиляции азота, несмотря на то, что количество азотобактерий в этих почвах довольно большое (в одном г почвы—15 миллионов). Наоборот, те растения (озимая пшеница, картофель), которые мало или совсем не накапливают азотистых веществ, а дают много безазотистых органических веществ, способствуют жизненным процессам азотобактерий и увеличивают интенсивность ассимиляции азота.

7. При составлении севооборота необходимо учесть вышеизложенное и составить его таким образом, чтобы после растений, накапливающих в период своей вегетации азотистые вещества (эспарцет, люцерна), следовали не накапливающие азотистых веществ, а, наоборот, усваивающие их (злаки, картофель, табак и т. д.). Подобная последовательность очень способствует повышению урожайности сельскохозяйственных культур, без применения дополнительных азотистых удобрений.